Հավելված N 4

Հայաստանի Հանրապետության

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի

2020 թվականի 05 մարտի N 22-Ա/Ք հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հավասար հնարավորությունների ապահովման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, Նախարարության և սույն կանոնադրություններով:

3. Նախարարը հաստատում և փոփոխում է Վարչության հաստիքացուցակը, որը ներկայացնում է Նախարարության գլխավոր քարտուղարը՝ համաձայնեցնելով Վարչության պետի հետ:

4. Վարչությունն իր գործառույթներն իրականացնում է Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների և գրասենյակների, ինչպես նաև Նախարարությանը ենթակա մարմնի, կազմակերպությունների և հիմնարկների հետ համագործակցելով:

5. Վարչությունը Նախարարի, Նախարարի տեղակալների և Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ իր իրավասությունների շրջանակներում համագործակցում է Հայաստանի Հանրապետության նախարարությունների, գերատեսչությունների, դրանց ստորաբաժանումների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ:

6. Վարչությունը իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է աշխատանքային ծրագրով: Վարչության աշխատանքային ծրագիրը յուրաքանչյուր տարի հաստատում է Նախարարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշմամբ սահմանված կարգով:

7. Վարչությունը կազմված է՝

1) հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնից.

2) տարեցների հիմնահարցերի բաժնից.

3) մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնից.

4) երեխաների հիմնահարցերի բաժնից

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Վարչության նպատակը հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց, երեխաների, տարեցների, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի իրավունքների և սոցիալական պաշտպանության քաղաքականության մշակումն ու իրականացումն է:

9. Վարչության խնդիրներն են՝

1) հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց, երեխաների, տարեցների, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի իրավունքների պաշտպանության պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը,

2) հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց, երեխաների, տարեցների, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական ծրագրերի մշակումն ու իրականացումը,

3) հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց, երեխաների, տարեցների, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի իրավունքների բնագավառը կարգավորող իրավական ակտերի միասնական կիրառման ապահովումը:

III. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման քաղաքականության մշակում և դրա իրականացման ապահովում,

2) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտի օրենսդրության վերաբերյալ առաջարկությունների մշակում,

3) բժշկասոցիալական փորձաքննության ոլորտի օրենսդրության վերաբերյալ առաջարկությունների մշակում և բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի համակարգում,

4) բժշկասոցիալական փորձաքննության բողոքարկված որոշումների քննարկում և եզրակացությունների տրամադրում օրենսդրությամբ սահմանված կարգով,

5) հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների ուսումնասիրություն, սոցիալական ներառմանն ուղղված պետական նպատակային ծրագրերի մշակում, դրանց իրականացման ապահովում,

6) հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական և սոցիալական, վերականգնողական ծրագրերի, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցներով ապահովելու պետական նպատակային ծրագրերի մոնիթորինգին մասնակցություն,

7) բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի իրականացման մոնիթորինգին մասնակցություն,

8) աջակցող միջոցներ տրամադրող կազմակերպություններից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ընդունում, վերլուծում, դրանց հիման վրա առաջարկությունների մշակում,

9) բժշկասոցիալական փորձաքննական բաժինների ընդունած որոշումների բողոքարկման վերաբերյալ քաղաքացիների դիմում-բողոքների, ներառյալ բժշկասոցիալական փորձաքննական գործի և դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության իրականացում և համապատասխան եզրակացության տրամադրում՝ հիմք ընդունելով բաժնում ընդգրկված բժիշկ-փորձագետների մասնագիտական եզրակացությունը,

10) 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության, այդ թվում՝ խնամքի այլընտրանքային ծառայությունների տրամադրման վերաբերյալ պետական ծրագրերի մշակում,

11) հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բնագավառի միջնաժամկետ ծախսերի ծրագրերին և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հիմնական ցուցանիշներին վերաբերող առաջարկություններ մշակում,

12) հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բնագավառում իրականացվող պետական նպատակային ծրագրերի կատարման աստիճանը բնորոշող ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվությունների մշակում,

13) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Հայաստանի Հանրապետության տարածք

ներմուծվող ապրանքների նպատակային նշանակության վերաբերյալ եզրակացության տրամադրում,

14) հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի գործունեության կազմակերպական-տեխնիկական աշխատանքների ապահովում,

15) հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող կազմակերպություններին մեթոդական պարզաբանման տրամադրում,

16) հաշմանդամություն ունեցող անձանց տվյալների շտեմարանի ստեղծման աշխատանքների իրականացման և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բնագավառի տեղեկատվական համակարգի ձևավորման ապահովում,

17) Նախարարության արտաքին կապերի վարչության հետ համատեղ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն,

18) հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերին նվիրված գիտաժողովների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում և մասնակցություն,

19) քաղաքացիների գրավոր և բանավոր դիմումների, բողոքների քննարկում, անհրաժեշտության դեպքում դրանցում բարձրացված խնդիրների ուսումնասիրում և պարզաբանումների տրամադրում,

20) Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի հետ համատեղ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բնագավառում վարվող քաղաքականության և իրականացվող ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկման ապահովում,

21) Նախարարության կանոնադրական նպատակների իրականացման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների առումով զգայունության ապահովմանն ուղղված առաջարկությունների ներկայացում:

IV. ՏԱՐԵՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

11. Տարեցների հիմնահարցերի բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Տարեցների սոցիալական ներառման քաղաքականության մշակում և դրա իրականացման ապահովում,

2) տարեցների իրավունքների պաշտպանության ոլորտի օրենսդրության զարգացման նպատակով առաջարկությունների մշակում,

3) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեցների, այդ թվում՝ խնամքի այլընտրանքային ծառայությունների տրամադրման վերաբերյալ պետական ծրագրերի մշակում և դրանց իրականացման ապահովում,

4) Նախարարության ենթակայության ներքո գտնվող, ինչպես նաև Նախարարության հետ համագործակցության շրջանակներում պետական աջակցության ծրագրեր իրականացնող՝ բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի հաստատություններում, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում և տնային պայմաններում տարեց և 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի և սոցիալական այլ ծառայությունների տրամադրման գործընթացի համակարգում,

5) տարեց և 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի և սոցիալական այլ ծառայություններ տրամադրող պետական և ոչ պետական կազմակերպություններից հաշվետվությունների ստացում և վերլուծում,

6) Նախարարության քննարկմանը ներկայացված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում և համագործակցություն Նախարարության սոցիալական ազդեցության գնահատման և հետազոտական վարչության հետ,

7) տարեցների իրավունքների պաշտպանության բնագավառի միջնաժամկետ ծախսերի ծրագրերին և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հիմնական ցուցանիշներին վերաբերող առաջարկությունների մշակում,

8) տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտում զարգացման ծրագրերի, հայեցակարգային ուղղությունների մշակում, իրականացում և համակարգում,

9) սոցիալական տարբեր խմբերին պատկանող անձանց, մասնավորապես՝ պատերազմի, աշխատանքի և զինված ուժերի վետերանների, Չեռնոբիլի ԱԷԿ-ի մասնակիցների, բռնադատվածների սոցիալական պաշտպանության պետական ծրագրերի մշակում և դրանց իրականացման ապահովում,.

10) տարեցների և 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության հիմնահարցերի լուծման նպատակով շահագրգիռ պետական և ոչ պետական կազմակերպությունների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության ապահովում,

11) տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող պետական նպատակային ծրագրերի կատարման աստիճանը բնորոշող ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվությունների կազմում և ներկայացում,

12) տարեց և 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի և սոցիալական այլ ծառայություններ տրամադրող պետական և ոչ պետական կազմակերպություններին մեթոդական-գործնական օգնության ցուցաբերում,

13) խնամքի և սոցիալական ծառայությունների անձնագրերի, խնամքի ծառայությունների տրամադրման չափորոշիչների, ընթացակարգերի, մեթոդական ցուցումների և մեթոդական այլ փաստաթղթերի մշակում,

14) որոշակի բնակության վայր չունեցող, անօթևան, սոցիալապես անապահով և (կամ) հատուկ խմբերին դասված անձանց ժամանակավոր կացարանի խնդրի լուծմանն ուղղված պետական ծրագրերի մշակում, իրականացում և ծրագրերի համակարգում,

15) տարեցների հիմնահարցերին նվիրված գիտաժողովների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում և մասնակցություն,

16) քաղաքացիների ընդունելության կազմակերպում, քաղաքացիների գրավոր և բանավոր դիմումների, բողոքների քննարկում, անհրաժեշտության դեպքում դրանցում բարձրացված խնդիրների ուսումնասիրում և վերլուծություն, ինչպես նաև պարզաբանումների տրամադրում և խորհրդատվական օգնության կազմակերպում,

17) Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի հետ համատեղ ապահովում տարեցների իրավունքների բնագավառում վարվող քաղաքականության և իրականացվող ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկման,

18) Նախարարության կանոնադրական նպատակների իրականացման գործընթացում տարեցների իրավունքների առումով զգայունության ապահովմանն ուղղված առաջարկությունների ներկայացում:

V. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

12. Երեխաների հիմնահարցերի բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) երեխաների իրավունքների ապահովման քաղաքականության մշակում և դրա իրականացման ապահովում,

2) երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառի օրենսդրության զարգացում,

3) երեխաների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների ապաինստիտուցիոնալացմանն ու նրանց մուտքը հաստատություններ կանխարգելելուն ուղղված պետական ծրագրերի մշակում և իրականացում,

4) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական պաշտպանության և ծառայությունների հասանելիությանը և հասցեականությանն ուղղված պետական ծրագրերի մշակում և դրանց իրականացման ապահովում,

5) որդեգրման ենթակա երեխաների, որդեգրել ցանկացող անձանց, որդեգրողների և որդեգրված երեխաների, ինչպես նաև խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց կենտրոնացված հաշվառման իրականացում,

6) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման իրականացում,

7) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում՝ մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամքի և դաստիարակության համակարգում և կազմակերպում,

8) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, մասնավորապես առանց ծնողական խնամքի մնացած և հաշմանդամություն ունեցող երեխաների համայնքահենք ծառայությունների ստեղծմանն ու զարգացմանն ուղղված ծրագրերի մշակում,

9) խնամատար ընտանիքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի ապահովում,

10) երեխաների հիմնահարցերի բնագավառի միջնաժամկետ ծախսերի ծրագրերին և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հիմնական ցուցանիշներին վերաբերող առաջարկությունների մշակում,

11) երեխաների հիմնահարցերի բնագավառում իրականացվող պետական նպատակային ծրագրերի կատարման աստիճանը բնորոշող ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվությունների մշակում,

12) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների նպատակային նշանակության վերաբերյալ եզրակացության տրամադրում,

13) երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործունեության կազմակերպական-տեխնիկական աշխատանքների ապահովում,

14) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում և սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում խնամք տրամադրող կազմակերպություններից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ընդունում, վերլուծում, դրանց հիման վրա առաջարկությունների մշակում,

15) Նախարարության համակարգի և երեխաների իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպություններին մեթոդական պարզաբանման տրամադրում,

16) խնամքի իրականացնող կազմակերպություններում (անկախ դրանց կազմակերպա-իրավական ձևից) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչների պահպանման նկատմամբ մոնիթորինգին մասնակցություն,

17) երեխաների հիմնահարցերի բնագավառում իրականացվող քաղաքականության և պետական նպատակային ծրագրերի մոնիթորինգին մասնակցություն,

18) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների տվյալների շտեմարանի ձևավորման և երեխաների հիմնահարցերի բնագավառի տեղեկատվական համակարգի շահագործման և ձևավորման ապահովում,

19) Նախարարության արտաքին կապերի վարչության հետ համատեղ երեխաների հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն,

20) երեխաների հիմնահարցերին նվիրված գիտաժողովների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում և մասնակցություն,

21) քաղաքացիների ընդունելության կազմակերպում, քաղաքացիների գրավոր և բանավոր դիմումների, բողոքների քննարկում, անհրաժեշտության դեպքում դրանցում բարձրացված խնդիրների ուսումնասիրում և վերլուծություն, ինչպես նաև պարզաբանումների տրամադրում և խորհրդատվական օգնության կազմակերպում,

22) Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի հետ համատեղ երեխաների հիմնահարցերի բնագավառում վարվող քաղաքականության և իրականացվող ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկման ապահովում,

23) Նախարարության կանոնադրական նպատակների իրականացման գործընթացում երեխաների իրավունքների առումով զգայունության ապահովմանն ուղղված առաջարկությունների ներկայացում:

VI. ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

13. Մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Գենդերային հավասարության և մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հիմնահարցերի բնագավառների քաղաքականության մշակում և իրականացման ապահովում,

2) կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների հավասարության և մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության ոլորտի օրենսդրության զարգացման նպատակով առաջարկությունների մշակում,

3) ընտանիքում բռնության և գենդերային խտրականության, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման կանխարգելման ուղղությամբ առաջարկների ներկայացում,

4) ընտանիքում բռնության ենթարկված անձանց և մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի սոցիալական վերականգնամնն ուղղված ծրագրերի մշակում, առաջարկությունների ներկայացում և դրանց իրականացման ապահովում,

5) ընտանիքում բռնության ենթարկված անձանց և մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ընդունում, վերլուծում, դրանց հիման վրա առաջարկությունների ներկայացում,

6) ընտանիքում բռնության ենթարկված անձանց և մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերին ուղղված միջնաժամկետ ծախսերի ծրագրերին և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հիմնական ցուցանիշներին վերաբերող առաջարկությունների մշակում,

7) կանանց հարցերով խորհրդի գործունեության կազմակերպական-տեխնիկական աշխատանքների ապահովում,

8) կանանց իրավունքների, ընտանիքում բռնության մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հարցերով զբաղվող կազմակերպություններին մեթոդական պարզաբանման տրամադրում,

9) մասնակցություն կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարության, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հիմնահարցերի բնագավառում իրականացվող քաղաքականության և պետական նպատակային ծրագրերի մոնիթորինգին,

10) Նախարարության արտաքին կապերի վարչության հետ համատեղ կանանց իրավունքների և թրաֆինքինգի ենթարկված անձանց հիմնահարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն,

11) կանանց իրավուքներին և մարդկանց թրաֆիքինգ և շահագործման զոհերի հիմնահարցերին նվիրված գիտաժողովների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում և մասնակցություն,

12) քաղաքացիների ընդունելության կազմակերպում, քաղաքացիների գրավոր և բանավոր դիմումների, բողոքների քննարկում, անհրաժեշտության դեպքում դրանցում բարձրացված խնդիրների ուսումնասիրում և վերլուծություն, ինչպես նաև պարզաբանումների տրամադրում և խորհրդատվական օգնության կազմակերպում,

13) Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի հետ համատեղ կանանց իրավունքներին և մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի հիմնահարցերի բնագավառում վարվող քաղաքականության և իրականացվող ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկման ապահովում,

14) Նախարարության կանոնադրական նպատակների իրականացման գործընթացում կանանց և մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց իրավունքների առումով զգայունության ապահովմանն ուղղված առաջարկությունների ներկայացում:

VII. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԸ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

14. Վարչության պետը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

15. Վարչության պետը՝

1) իրականացնում է Վարչության աշխատանքների կազմակերպումը և անմիջական ղեկավարումը.

2) Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է Վարչության կողմից նախապատրաստված Նախարարի հրամանների, այլ իրավական ակտերի և փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի մշակումը.

3) Նախարարության գլխավոր քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ՝ Վարչության աշխատողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապատրաստելու, խրախուսելու և կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.

4) Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է քաղաքացիների ընդունելությանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կատարում է քաղաքացիների ընդունելություն.

5) Նախարարության գլխավոր քարտուղարին է ներկայացնում Վարչության աշխատանքային ծրագիրը.

6) իր լիազորությունների շրջանակներում այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր.

7) իր լիազորությունների շրջանակներում ապահովում է Վարչության և այլ մարմինների փոխհարաբերությունները.

8) սահմանված կարգով ստորագրում է Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը.

9) Վարչության լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

10) Նախարարության գլխավոր քարտուղարին է ներկայացնում առաջարկություններ ըստ անհրաժեշտության, Վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, աշխատանքային խմբեր կազմավորելու վերաբերյալ.

11) իր լիազորությունների շրջանակներում, համաձայնեցնելով Նախարարության գլխավոր քարտուղարի հետ, կարող է հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, աշխատողների, համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.

12) Նախարարի, Նախարարի տեղակալների կամ Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և այլ մարմինների նիստերին և խորհրդակցություններին.

13) իր լիազորությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, համապատասխան զեկուցումներ է ներկայացնում իր սպասարկած ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում.

14) իր լիազորությունների շրջանակներում տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ.

15) պատասխանատվություն է կրում Վարչության առջև դրված խնդիրների լուծման համար.

16) կատարում է Նախարարի կողմից վարվող քաղաքականության մասով՝ Նախարարի, Նախարարի տեղակալների, իսկ քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով՝ Նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարականները.

17) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև իր պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

16. Վարչության աշխատողներն աշխատանքի ընդունվում և աշխատանքից ազատվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: